

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՆԵՐՆԵՒԻ ՀՈԳԵՐՈՒ ԳԻՄԱՅԻՆ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(Գոյականի դիմային առումը)

2. Ն. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ

Հոգերը, իբրև լեզվական յուրահատուկ իրողություն, հայ քերականագիտության մեջ ըմբռնվել են քերականական մտքի սկզբնավորման շրջանից՝ նախապես բավական ժամանակ հոգերը համարվել են առանձին խոսքի մաս, «բայց «սուղ» խոսքի մաս, այն է՝ զուրկ ինքնուրույն նյութական իմաստից»¹, Հետագայում դրանք դիտվել են իբրև դերանունների մի տեսակ, իսկ ավելի ուշ շրջանում (XVIII դ.)՝ որոշ դերանունների իմաստներն արտահայտող մասնիկներ և ոչ թե ինքնուրույն խոսքի մաս կամ դերանվան առանձին տեսակ։ «Սոքա (ս, դ, ն հոգերը— Հ. Ն.) թէպէտ ընդ դերանունս դասին, բայց չեն յատկապէս դերանուն, զի ոչ զնին փոխանակ անուան»,— գրում է Միք. Չամչանը², այնուհետև նրբորեն դիտում, որ դրանք, դրվելով անունների վերջում, որոշում են նրանց դեմքը։

Աշխարհաբարի քերականները, նկատի ունենալով հայերենի հոգերի իմաստային տեղաշարժերը և տարբերացումը, տեսակավորեցին դրանք։ Այսուրեւ յանն առանձնացնում է «դերանվանական կամ դիմորոշ» հոգեր երեք տարատեսակով՝ անձնական, ցուցական և ստացական դերանունների փոխարեն գործածվող։ Ստ. Պալասանյանը որոշիչ հոգը դնում է գոյականի, իսկ դերանվանական հոգերը՝ դերանունների բաժնում։ Աշխարհաբարի հոգերի ավելի մանրամասն քննությունը տալիս է Մ. Աբեղյանը՝ համորեն վեր հանելով նրանց իմաստային և կիրառական մի շարք նորություններ³։

Սույն հոգվածում մեր նպատակը չէ կանդ առնել հոգերի ծագման, զարգացման, իմաստային տեղաշարժերի, ինչպես և նրանց վերաբերող բազմազան դիտողությունների, հարցադրումների, եզրահանգումների վրա⁴։

Այստեղ մեր առաջադիր խնդիրն է միայն ժամանակակից գրական հայերենի դիմային իմաստ արտահայտող հոգերի քերականական էություն, արժեքի, նրանց իմաստային առումների վերլուծությունը՝ որոշ դիտողություններով հանդերձ՝ կապված նրանց գործածության ոլորտի ու հաճախականության հետ։

Տարբեր լեզուներում հոգերը տարբեր նշանակություններ, դրսևորման ձե-

1 Գ. Զահուկյան, Քերականական և ուղղագրական աշխատություններ հին և միջնադարյան Հայաստանում, Երևան, 1954, էջ 78—79։

2 Տե՛ս Միք. Չամչան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Շուշի, 1859, էջ 106։

3 Տե՛ս Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, էջ 121 և նույնի «Հայոց լեզվի տեսություն», Երևան, 1965, էջ 518—521։

4 Այդ մասին տե՛ս Հ. Լեւոնյան, Կիսատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, Երևան, 1954։ Գր. Ղափանցյան, Ընդհանուր լեզվաբանություն, հ. 1, Երևան, 1939. Э. Туманян, Артикли в современном армянском языке, М.—Ер., 1963.

վեր ու քերականական տարբեր արժեք ունեն⁵։ Ուստի այս կամ այն լեզվի հոգևորի համաժամանակյա քննության, նրանց էություն բացահայտման համար պետք է ունենալ կոնկրետ մոտեցում։ Ըստ ս, դ, ն/ը մասնիկների ծագումնային և իմաստային աղբյուրի (ես, դու, նա, սա, դա, նա, այս, այդ, այն դերանունների հետ) մինչև վերջերս էլ մեր քերականագիտության մեջ դրանք գիտվում են դերանվան խոսքի մասային իրողություն, դերանունների նշանակությամբ գործածվող (կամ նրանց փոխարինող) մասնիկներ՝ «դերանվանական հոգևոր» ընդհանուր անվանումով⁶։ Բուհական ու նորմատիվ դասընթացներում դրանք տրվում են դերանուն խոսքի մասի բաժնում, իբրև նրա հետ կապվող քերականական յուրահատուկ իրողություն։ Այս մոտեցումը ունի հիմքեր ունենալով հանդերձ, այնուամենայնիվ հետևողական չի կարելի համարել։

Դիմային իմաստ արտահայտող ս, դ (մասամբ՝ ն/ը) մասնիկները իրենց ձևա-իմաստային կողմերով եթե բաղդատելու լինենք այն դերանունների հետ, որոնց աղբյուրակցվում են, ապա կարելի է նկատել հետևյալը. նախ՝ իմաստային կողմով՝ բովանդակության պլանով։ Այս մասնիկները, դերանվանական ծագում ունենալով, իրենց իմաստով որոշ ընդհանրություն ունեն անձնական դերանունների հետ՝ արտահայտում են այդ դերանունների դիմային իմաստները կամ, կիրառությամբ պայմանավորված, դիմային իմաստի հետ նաև նրանց սեռական հոլովածների իմաստը՝ ստացականությունը։ Բայց բաղդատվող երկու եզրերը իրենց բովանդակությամբ լրիվ չեն համընկնում, որովհետև ես, դու բառերը դերանվանաբար ցույց են տալիս անձ (եզակի կամ հոգնակի թվով) և այդ անձի դիմային դիրքը՝ խոսող կամ խոսակից լինելը, միջնդեռ ու և դ մասնիկները, դրվելով գոյականի վրա, հաղորդում են նրան դեմքի իմաստ կամ դիմային տարբերակմամբ ստացականության իմաստ՝ նշելով անվանապես արտահայտվող առարկայի դիմային հարաբերությունը։

Օրինակ՝ «Ես» պոեմա... լսում եմ նրանց ձայնը» (Ծ. 9.)։ «Ինչո՞ւ տղամարդիկդ այդքան ուշ-ուշ եք լաց լինում, բայց որ լաց եք լինում, քարի սիրտ պիտի լինի, որ ձեզ դիմանա» (Ն. Դ.)։ Առաջին օրինակում «ես» դերանվամբ արտահայտվում է ոչ թե «պոեմա» բառածեղի միայն ս մասնիկի բովանդակությունը, այլ ամբողջ բառածեղի բովանդակությունը, որի միայն մի կողմն է արտահայտում ս-ն՝ միայն դիմային հարաբերության իմաստը, իսկ անձը նշվում է «պոետ» մասով։ Մյուս օրինակում «դուք» դերանունն արտահայտում է «տղամարդիկդ» բառածեղի ամբողջ իմաստը, և պարզ է՝ դուք = տղամարդիկդ հավասարության մեջ դ-ն = չէ դուք-ին, այլ արտահայտում է նրա իմաստային միայն մի կողմը՝ դիմային հարաբերությունը։ Ս և դ մասնիկների համար նույնը պետք է ասել նաև թեք հոլովածներով հետևյալ զուգահեռներում՝ իմ-պոեմիս, ինձ-պոեմիս, ձեզ-տղամարդկանցդ, ձեզանից-տղամարդկանցիցդ և այլն։

Նույնիսկ ստացական իմաստով կիրառության ժամանակ, երբ թվում է, թե ս, դ մասնիկներն արտահայտում են ես և դու դերանունների սեռական հո-

5 Տե՛ս Հ. ր. Ա ռ ա յ ա ն, նշվ. աշխ. М. Д. Фридман, О морфемном характере артикля, В. Я., 1962, № 5: Է. Ա ղ ա յ ա ն, Լեզվաբանության ներածություն, Երևան, 1963, էջ 239—240։

6 Տե՛ս Ծ. Կ у м а н я н, նշվ. աշխ. է. Բ. Ա ղ ա յ ա ն, Հ. Խ. Բ ա ռ ս ե ղ յ ա ն, Հասարակագիտության միջն. դպր. 5—7-րդ դասարանների համար, Երևան, 1965։ Ս. Ա բ ռ ա ճ ա մ յ ա ն, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969։

լուվաձևերի խմաստն ամբողջությամբ (գիրքս = իմ գիրքը, գիրքդ = քո գիրքը), այդ մասնիկներն իրենց իմաստով լիովին համարժեք չեն նշված դերանվանական ձևերին, չեն արտահայտում իմ և քո բառաձևերի անձի իմաստը, այլ դրսևեցրել են միայն նրանց դիմային և հոլովական (ստացականության) իմաստները: Եթե իմ բառաձևը ցույց է տալիս խոսող անձը, որին պատկանում է որևէ բան, ապա ս-ն արտահայտում է որևէ առարկայի ստացական հարաբերությունն այդ խոսող անձի նկատմամբ. նույնը վերաբերում է նաև քո դերանվանին ու դ մասնիկին:

Այսպիսով, ս, դ մասնիկները և բաղդատվող դերանունները բովանդակության պլանում մասնակիորեն են համընկնում: Նույնիսկ իմաստային այդ կողմը, որով համընկնում են, մեկում և մյուսում տարբեր բնույթ ունի. դերանվանական դեմքի իմաստը բացալան-ֆեռալանալան արժեք ունի, կազմում է դերանվան բառական նշանակության անբաժանելի տարրը, իսկ այս մասնիկներով արտահայտվող դիմային իմաստն ունի միայն ֆեռալանալան արժեք, որովհետև համապատասխան բառաձևում այն կազմում է ոչ թե հիմնական, այլ երկրորդական, լրացուցիչ իմաստը՝ տվյալ բառաձևով արտահայտվող առարկայի դիմային կամ ստացական-դիմային հարաբերությունը:

Բաղդատվող երկու եզրերը տարբերություն են ցուցաբերում նաև առաջնայաման պլանում: Ս, դ մասնիկները և համեմատվող դերանունները դիմային իմաստի արտահայտման լեզվական տարբեր միջոցներ են: Դերանուններում դեմքի իմաստն արտահայտվում է հիմնական ձևովներով, նրանցում այն բառական, հետևաբար, ինքնուրույն արտահայտություն ունի, մինչդեռ այս մասնիկներում դիմային իմաստը քերականական (ձևաբանական) արտահայտություն ունի, որովհետև դրանք բառափոխական երկրորդական ձևովներ են և ունեն նմանօրինակ ձևովների բոլոր հատկանիշները, այն է՝ չունեն ինքնուրույն գործածություն, միշտ համադրվում են հիմնական ձևովներին՝ հաղորդելով նրանց քերականական լրացուցիչ իմաստ. անփոփոխելի են իրենց գործադրման դիրքով: Զևա-իմաստային այս հատկանիշներով, քերականական արժեքով ս, դ մասնիկները նման են բայական դիմային վերջավորություններին: Եթե վերջիններս, իբրև բառափոխական երկրորդական ձևովներ, արտահայտում են բայիմաստի հարաբերությունը, մասնավորումը դիմային կողմերին, և նրանցով դեմքի իմաստը մտածվում է գործողության կամ եղելության պատկերացման հետ, ապա ս, դ մասնիկները ցույց են տալիս անվանարար արտահայտվող առարկայի դիմային հարաբերությունը, և նրանցով դեմքի իմաստը մտածվում է առարկայի պատկերացման հետ: Բացի դրանից, բայական դիմային մասնիկները դեմքի հետ միասին սինկրետիկ եղանակով արտահայտում են նաև թվի ու ժամանակի քերականական իմաստների հակադրություն (եզ. և հոգն. թվի տարբերություն ս, դ մասնիկներով արտահայտվում է միայն կիրառական պայմաններում և ոչ թե հատուկ ձևովում): Իսկ քերականական իմաստի վերացականությունը առավել բարձր մակարդակի է բայական դիմային վերջավորություններում, քան ս, դ մասնիկներում: Վերջապես, չնայած «իմ գիրքը» և «գիրքս» արտահայտությունները իմաստով համարժեք են, բայց մի դեպքում գործ ունենք շարահյուսական կապակցության հետ («իմ գիրքը»), իսկ մյուս դեպքում՝ ձևաբանական արտահայտության («գիրքս»):

Արդ, եթե դիմանիշ այս մասնիկներն իրենց ձևա-իմաստային հատկանիշ-

ներով ու գործածությամբ բառափոխական երկրորդական ձևույթներ են և ունեն ձևակազմական արժեք, ուրեմն նրանցով կազմվում է քերականական որոշակի ձև՝ քերականական համապատասխան իմաստով: Եվ քանի որ այս ձևույթները համադրվում են գոյականին (կամ գոյականաբար գործածված այլ բառերի)՝ դիմային կամ ստացական-դիմային հարաբերությամբ մասնավորեցնելով նրա բառական իմաստը, ուստի նրանցով կազմվում է գոյականի քերականական որոշակի ձևը:

Ելնելով այս բոլորից՝ ինչո՞ւ քերականական այդ իրողությունը չդիտել գոյական խոսքի մասի ձևաբանական հատկանիշ: Այլ բան է, թե նրանով արտահայտվող դիմային իմաստը ընդհանուր կողմեր ունի համապատասխան դերանուններով դրսևորվող իմաստի հետ: Բայց չէ՞ որ ընդհանրություններ կարելի է նշել նաև բայական դիմային մասնիկների ու նույն դերանունների միջև: Փաստորեն տվյալ դեպքում գործ ունենք ոչ թե դերանվան խոսքի մասային քերականական մի իրողության, այլ հայերենի գոյական խոսքի մասի ձևակազմական յուրահատուկ դրսևորումներից մեկի հետ: Եվ որովհետև այդ դրսևորումը ձևա-իմաստային համապատասխան միավորներով՝ բառաձևերով, որոշակի համակարգ է կազմում, ուրեմն գործ ունենք գոյականի ձևաբանական մի յուրահատուկ կարգի հետ: Թերևս այն անվանենք գոյականի դիմային առում:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ժամանակակից գրական հայերենի ձևաբանական հատկանիշներից մեկը դիմային առումն է, երբ գոյականը համապատասխան ձևավորմամբ համադրական մի բառաձևի սահմաններում արտահայտում է դեմքի քերականական իմաստ:

Այս կապակցությամբ ուշագրավ է պրոֆ. Ղափանցյանի հետևյալ դիտողությունը. «Դեմք... արտահայտում են և՛ գոյականները (և դերանունները), և՛ բայերը (գիրքս, գրքիս, գրքիցս... գիտեմ, գիտես, գիտե՞ս)»: Պրոֆ. Զահեկյանը այս հատկանիշը դիտում է իբրև գոյականի չափայացման կարգի մի ենթատեսակ՝ անվանելով «ցուցա-ստացական ենթակարգ»:

Գոյականի դիմային առումը, իբրև ձևաբանական կարգ, ունի իր ձևա-իմաստային կողմերը: Իմաստային կողմն այն է, որ ցույց է տալիս հաղորդակցման պրոցեսում անվանարար արտահայտվող առարկայի՝ տվյալ խոսքային իրադրությամբ դիմային դիրքը կամ հատկացումը, պատկանելիությունը դիմային այս կամ այն կողմին: Ավելի ընդհանրացնելով կարող ենք ասել՝ ցույց է տալիս հաղորդակցման պրոցեսում անվանարար արտահայտվող առարկայի՝ խոսողի կողմից մասնավորումը դիմային երեք կողմերի՝ խոսողի, խոսակցի կամ 3-րդ դեմքի նկատմամբ: Առաջին դեմքի նկատմամբ մասնավորումն արտահայտվում է ս մասնիկով, երկրորդ դեմքի նկատմամբ՝ դ մասնիկով, իսկ 3-րդ դեմքի նկատմամբ՝ այս երկու մասնիկների բացումամբ՝ «գրո» ցուցիչով, առանձին դեպքում՝ ը/ն մասնիկներով: «Զրո» ցուցիչը թեև ս և դ մասնիկների հակադրությամբ նշանակիր է, բայց ինքնաբավ չէ դիմային մասնավորումն արտահայտելու համար, և հաճախ շարահյուսական միջոցով է կոնկրետանում այդ մասնավորումը: Նշված յուրաքանչյուր դիմանիշ

7 Գր. Ղափանցյան, Նշվ. աշխ., էջ 221—222:

8 Տե՛ս Գ. Զահեկյան, Ժամանակակից հայերենի հոլման համակարգը, Երևան, 1967, էջ 39, նաև՝ Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 184 և 188:

մասնիկով, այսպիսով, կազմվում է դիմային առման եռանդամ հակադրության կարգային (կատեգորիալ) մի եզրը՝ ձևա-իմաստային անդամը:

Պետք է ասել, որ գոյականի դիմային առումը նրա կիրառական հատկանիշներից, իմաստային առումներից մեկն է՝ կապված հաղորդակցման պրոցեսի հետ, և ոչ թե բառական կայուն հատկանիշ է նրա համար⁹: Ի տարբերություն անձնական (դիմային) դերանունների, գոյականն ինքնին, առանձին վերցրած դիմային հարաբերությամբ չի մտածվում, չեզոք է դեմքի նկատմամբ: Կիրառությունից դուրս, իբրև լեզվի համակարգի բառական միավորներ, գոյականները չեն արտահայտում դիմային որևէ հարաբերություն: Միայն հաղորդակցման պրոցեսում խոսողի կողմից առարկայի գաղափարը կարող է մտածվել ինչպես այլ հարաբերություններով (թվային կամ հոլովական իմաստներով) մասնավորված, այնպես էլ դիմային կողմերի նկատմամբ ունեցած այս կամ այն առնչությամբ: Վերջինս մեր լեզվում կարող է դրսևորվել ինչպես բառական միջոցներով («իմ հայրը») կամ շարահյուսական (և կոնտեքստուալ) եղանակով (օր.՝ «Հայր, դու իրավացի էիր», «Գազիկը հոգն էր նման շատ գծերով»), այնպես էլ գոյականի հատուկ ձևակազմությամբ՝ դիմային ասմամբ. երբ դիմային այդ հարաբերությունը դրսևորվում է գոյականի մի բառաձևի սահմաններում (օր.՝ տեղացիներս, տեղացիներդ, տեղացիները կամ հայրս, հայրդ և այլն): Բանն այն է, սակայն, որ հաղորդակցման պրոցեսում, կիրառության մեջ էլ միշտ չէ, որ գոյականը լինում է դիմային այս կամ այն առումով: Կան դեպքեր, երբ խոսքի մեջ գոյականը գործածվում է դիմային չեզոքությամբ: Այդպես է, օրինակ, երբ այն կիրառության մեջ արտահայտում է ոչ թե կոնկրետ, սահմանագծված առարկայի իմաստ, այլ ամենաընդհանուր վերացական հասկացություն: Օրինակ՝ «Ծրածշտությունը հոգևոր սնունդ է» նախադասության մեջ սնունդ գոյականը մտածվում է դիմային չեզոքությամբ: Սովորաբար գոյականը այսպես է մտածվում, երբ բուն առարկայական իմաստով չի գործածվում: Այսպես, օրինակ, «Բժիշկ Արսենը քաղաքում չէր» նախադասության մեջ «բժիշկ» գոյականը կիրառված է հատկանշային իմաստով և չի մտածվում դիմային որևէ հարաբերությամբ: Մինչդեռ նույն գոյականը հետևյալ կիրառության մեջ դիմային Յ-րդ դիրքում է. «Բժիշկը ամեն օր այցելում էր իր հիվանդներին»:

Այսպիսով, գոյականը խոսքի մեջ գործածվում է դիմային առմամբ կամ դիմային չեզոքությամբ: Դա նրա կիրառական հատկանիշներից մեկն է: Այս իմաստով կարելի է ասել, որ գոյականի դիմային առումը ձևարանական-հաղորդակցային (կոմունիկատիվ) քերականական կարգ է:

Ժամանակակից հայերենում գոյականի դիմային առումն ունի երկու ենթատեսակ՝ բուն-դիմային և ստացական-դիմային: Երկուսն էլ արտահայտվում են բառափոխական նույն ձևով՝ ներկայիս, ս, դ, կամ առանձին դեպքերում՝ ն/ը մասնիկներով: Այս ձևովները համատեղում են երկու առումների իմաստները, բայց ոչ թե միաժամանակ, այլ կիրառական տարբեր պայմաններում:

Քննենք դիմային առման առաջ երկու ենթատեսակներն առանձին-առանձին: Բուն-դիմային ասում: Այս կամ այն գոյականը բուն-դիմային առմամբ գործածելիս նշվում է, թե նրանով արտահայտվող առարկան կամ առարկաների խումբը հաղորդակցման պրոցեսում իբրև դիմային ո՞ր կողմն է հանդես

⁹ Հմտտ. Գ. Սեազ, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1939, էջ 165:

գալիս, ո՛ր դեմքի նկատմամբ մասնավորվելով է նույնացվում նրա հետ: Ուրեմն, բուն-դիմային առման ժամանակ դրսևորվում է գոյականով արտահայտվող առարկայի և դիմային այս կամ այն կողմի նույնացման հարաբերություն, և դեմքի բովանդակությունն արտահայտվում է անվանապես: Այսպես՝ «Մի ձեռունուս խոսքին մլտիկ, Տես քու խելքը ի՞նչ է կըտրում» (Հ. Թ.), «...հեծելագունը Բահայան ըսպառազին կանգած է պալատի շրջակայքում և սպասում է ղիցունուդ հրամանին» (Ն. Զ.): Այս օրինակներում «ծերունուս» և «դիցունուդ» եզակի թվի բառաձևերով նշվում են խոսողը և խոսակիցը, այսինքն՝ այդ գոյականներով արտահայտվող որոշակի, կոնկրետ անձերը խոսքային տրվյալ իրադրություններում հանդես են գալիս իբրև խոսող («ծերունուս») և խոսակից («դիցունուդ»): Իսկ հետևյալ օրինակներում՝ «Հայերիս մոտ բաժինքը օրենքի պես մի բան է» (Գ. Բ.), «Ինչո՞ւ եք երիտասարդներդ դժբախտության հանդիպելուց հետո միայն հիշում մեզ...» (Ն. տ.), «հայերիս» և «երիտասարդներդ» հոգնակի թվի բառաձևերով անվանապես արտահայտվում են դիմային. 1-ին և 2-րդ կողմերը:

Փաստական նյութի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ գոյականի եզակի թվի բուն-դիմային առումը գործածության հաճախականությամբ որոշակիորեն զիջում է հոգնակի ձևերի նույն առմանը:

Ինչպես բայական և դերանվանական դեմքերի, այնպես էլ գոյականի բուն-դիմային առման ժամանակ 1-ին և 2-րդ դեմքերը 3-րդ դեմքի նկատմամբ զգալի յուրահատկություն են ցուցաբերում: Արտահայտման պլանում՝ ունեն ձևական բացահայտ ցուցիչներ՝ ս, դ, իսկ 3-րդ դեմքը հանդիպադրվում է նրանց ոչ բացահայտ ցուցիչով, այն է՝ ս և դ մասնիկների բացառմամբ՝ զրո ցուցիչով:

Իմաստային տեսակետից՝ 1-ին և 2-րդ դիմային դիրքերում գոյականը միշտ կոնկրետ, որոշակի առարկա է արտահայտում, իսկ 3-րդ դեմքում գոյականով արտահայտվող առարկան կարող է լինել որոշակի կամ անորոշ: Այսպես, օրինակ, «Ծա ճանաչում եմ այդ աղջկան», «Մի մրահոն աղջիկ տեսա Ռիալտոյի կամուրջին» (Ավ. Իս.), «Ա՛յ տղա, աղջկա հետ խուլիս քեզ ինչո՞ւ ես կորցնում»: Այս օրինակներում ընդգծված գոյականները դիմային 3-րդ դիրքով են գործածված: Բայց 3-րդ դեմքի իմաստն ավելի որոշակի է մտածվում 1-ին օրինակում, երբ գոյականը որոշյալ առումով է, և նրանով միայն տվյալ որոշակի, առանձնացված առարկան է մտածվում: Իսկ գոյականի անորոշ առման ժամանակ (2-րդ և 3-րդ օրինակներում) նրանով մտածվող առարկայի դիմային դիրքը համեմատաբար տարտամ է մտածվում, հատկապես հեթեհայդ առարկան չի սահմանափակվում մի, ինչ-որ մի, յուրաքանչյուր, ամեն մի դերանուններով և նմանիմաստ այլ բառերով, ինչպես ունենք բերված վերջին օրինակում: Այն, որ 1-ին և 2-րդ օրինակներում «աղջիկ» գոյականը փոխարինելի է «նա» դերանվամբ (դիցուք՝ «Ծա ճանաչում եմ այդ աղջկան: Նա սովորում է 3-րդ կուրսում»: «Մի մրահոն աղջիկ տեսա...»: «Նա տխուր էր, լացակումած»), վկայում է, որ այն դիմային 3-րդ դիրքում է: Իսկ վերջին օրինակում նույն գոյականը նույն որոշակիությամբ չի փոխարինվում «նա» դերանվամբ, այդ պատճառով էլ նրա դիմային դիրքը տարտամ է մտածվում¹⁰: Անո-

¹⁰ Երբ գոյականը անորոշ առումով է, բուն-դիմային առման 3-րդ դեմքի և դիմային չեզոքության սահմանազգծումը, անցումը մեկից մյուսը հաճախ ընդգծված կերպով չի ընկալվում, մասնավոր՝ որ ձևային հակադրությամբ չի արտահայտվում նրանց տարբերությունը: Լրափր 8—6

որոշ առման ժամանակ գոյականի դիմային դիրքի որոշակի դրսևորմանը նպաստում են շարահյուսական որոշ պայմաններ: Օրինակ, ստորոգելիական հարաբերության մեջ գոյականն իբրև ենթակա գործածվելիս նրա դիմային դիրքը որոշակի է լինում բայ-ստորոգյալի դիմային համաձայնությամբ:

Բուն-դիմային առումը սերտորեն կապված է անձի և իրի քերականական կարգի հետ: Բանն այն է, որ բուն-դիմային առման ժամանակ եռանդամ հակադրություն դրսևորում են միայն անձնանիշ գոյականները, իսկ իր ցույց տվող գոյականները ունենում են դիմային մի դիրք՝ 3-րդ դեմք, որովհետև նրանցով արտահայտվող առարկաները խոսող և խոսակից կողմ չեն կարող լինել (եթե նկատի չունենանք անձնավորման դեպքերը փոխաբերական կիրառության ժամանակ, ինչպիսիք հանդիպում են հեքիաթներում, առակներում, մուլտիպլիկացիոն կինոնկարներում և այլուր): Ինչպես տեսնում ենք, այստեղ որոշ խումբ գոյականների համար քերականական հատկանիշի սահմանափակումը պայմանավորվում է այդ գոյականների բառիմաստով: Այնպես, ինչպես որոշ բայերի բայիմաստը անհամատեղելի է 1-ին և 2-րդ դեմքերի հետ, և այդ բայերը բնորոշվում են դիմային սահմանափակությամբ¹¹, այդպես էլ իր ցույց տվող գոյականները բնորոշ են բուն-դիմային մի դիրք՝ 3-րդ դեմք ունենալով: Նրանց բուն-դիմային առման հարացույցը միանգամայն է:

Որովհետև դիմային եռանդամ հակադրությունը հատուկ է անձնանիշ գոյականներին, այդ պատճառով էլ 3-րդ դեմքում նրանց դիմային դիրքը ներքին, պոտենցիալ հակադրության առկայության հետևանքով ավելի որոշակի է ընկալվում, քան իր ցույց տվող գոյականներինը: Ծիշտ է, իր ցույց տվող գոյականները չունեն բուն-դիմային առման եռանդամ հակադրություն, բայց դա չի նշանակում, որ ընդհանրապես դուրս են դիմային առումից: Այդ գոյականների դիմային դիրքը մտածվում է անձնանիշ գոյականների դիմային հարաբերությունների ընդհանուր ֆոնի վրա:

Ժամանակակից հայերենում բուն-դիմային առման ավելի կոնկրետ պատկերն ունենալու համար հետաքրքրական է, թե դիմային եռանդամ հակադրություն ունեցող գոյականները դիմային մի դիրք ունեցող գոյականների նկատմամբ քանակական ի՞նչ հարաբերություն ունեն: Այդ նպատակով վերցրել ենք «Հայ-նուսերեն բառարան»-ի երկրորդ հրատարակությունը (պարունակում է շուրջ քառասուն հազար բառ), հաշվել գոյական բառերը, նրանց ընդհանուր քանակի մեջ որոշել անձնանիշ և իրանիշ գոյականների քանակական մոտավոր բաշխվածությունը: Վիճակագրական այս վերլուծությամբ պարզվեց, որ բառարանում ընդգրկված մոտ 19500 գոյականից 2500-ը անձնանիշ են, իսկ մնացածը՝ իրանիշ, այսինքն՝ դրանք գոյականների ընդհանուր քանակի մեջ ներկայանում են 13/87 տոկոսային կամ 1/6,8 քանակական հարաբերությամբ¹²: Բայց պետք է ասել, որ պրակտիկ խոսքում անձ ցույց տվող բոլոր գոյականները 1-ին և 2-րդ դեմքերով գործածության հաճախականությամբ հավասար չեն: Կան անձնանիշ գոյականներ էլ, որոնք միայն պոտենցիալ կերպով են ենթա-

¹¹ Տե՛ս Ա. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի բայական դեմքի հարցեր, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր» (հաս. դիս.), 1962, № 2:

¹² Պարզ է, չա վիճակագրական մոտավոր պատկերն է, որովհետև այս բառարանը չի ընդգրկում ժամանակակից հայերենի ամբողջ բառապաշարը: Անձնանիշ հազարավոր գոյականներ, որ գործածվում ենք բանավոր խոսքում (օր.՝ կոնդեցի, սեքարեցի, ուշանցի, դաշտեցի...) ևն էլ կարող գտնել բառարանում:

դրում այդ դեմքերով գործածություն՝ տարբեր պատճառներով սահմանափակվելով միայն 3-րդ դեմքով: Օրինակ՝ աբբա, աղա, խան, ռափիկան, արքաճայր, աստվածամայր, ննջեցյալ, ֆաշիստ և այլն:

Գոյականի բուն-դիմային առման ձևաբանական հատկանիշով պայմանավորված՝ հայերենում դիմային երեք դիրքերում էլ առարկան կարող է թացի դերանվանական արտահայտությունից ունենալ նաև անվանական դրսևորում: 1-ին և 2-րդ դեմքերը անվանական արտահայտություն ունենում են սովորաբար այն դեպքում, երբ անհրաժեշտ է լինում դեմքի բովանդակությունն անվանապես ու որոշակի նշել:

Սովորական երևույթ է 1-ին և 2-րդ դեմքերի դերանվանաբար և անվանաբար համատեղ արտահայտությունը, երբ այդ դեմքերը նշվում են համապատասխան դերանուններով, և վերջիններիս կոնկրետ կիրառական բովանդակությունն էլ բացահայտվում է համապատասխան դիմային առում ունեցող գոյականներով: Այս դեպքում հաղորդման մեջ կարևոր է և՛ դեմքի իմաստը, և՛ դեմքի հետ՝ նրա կոնկրետ բովանդակությունը: Շարահյուսական առումով տվյալ դեպքում ձևավորվում է բացահայտիչ-բացահայտյալ հարաբերություն, որտեղ գոյականը դիմային համապատասխան ցուցիչով հարաբերում է դերանուն բացահայտյալին՝ դեմքով ու թվով համաձայնելով նրան: Սակայն դեպք է ասել, որ բացահայտիչ-բացահայտյալ հարաբերության մեջ դիմային համաձայնությունը շարահյուսական բացարձակ հատկանիշ չէ. առանձին դեպքերում գոյական բացահայտիչը չի ստանում համապատասխան դիմային ցուցիչ և, հետևաբար, չի համաձայնում բացահայտյալին: Այսպես է, երբ հաղորդման մեջ երկրորդական պլան է մղվում բացահայտիչի դիմային դիրքը. «Ես, Հայաստան երկրի դուստր և բանաստեղծ, ... արդ կանգնել եմ այստեղ՝ Մեծ Ռայնիսի հպարտ շիրիմի առաջ» (Ս. Կ.), «Մենք, առույգ ու ժիր գեղջուկ մանուկներ, երեք դասընկեր, ... տաղ էինք ասում» (Հ. Թ.):

1-ին կամ 2-րդ դեմքի դերանուն բացահայտյալի հետ դեմքով չի համաձայնում սովորական բացահայտիչը այն դեպքում, երբ ունի դիմային մի այլ իմաստով լրացում, քան բացահայտյալի դեմքի իմաստն է: Օրինակ՝ «Իսկ ես, Ջեք պետեր խոնարհ,— Այդ երզը ոսկեբառ ինչքան եմ ես լսել» (Ե. Զ.), «Մինչև այժմ դեռ չեմ հիշում գեթ մի օր, որ նա... մեզ՝ իր զավակների վրա ձեռք լինեք բարձրացրած» (Ն.-Դ.): Նույն ձևով չի համաձայնում գոյական բացահայտիչը, եթե ստացական-դիմային առում ունի, որովհետև այս դեպքում գոյականը միշտ դիմային 3-րդ դիրքում է լինում: «Մայրս», «մայրդ» բառաձևերով, եթե ս և ե դ մասնիկները ստացական-դիմային իմաստ ունեն, նշվում է 3-րդ դեմքի անձ, բացառվում է խոսող կամ խոսակից լինելը, որովհետև այդ մասնիկները չեն կարող միաժամանակ համատեղել կրկնակի՝ բուն-դիմային և ստացական-դիմային իմաստ: Օրինակ՝ «Ես, ժառանգորդդ քո երգ ու վերքի, եթե հպարտ եմ, հպարտ եմ քեզնիով» (Ս. Կ.):

Առաջին կամ երկրորդ դեմքի դերանուն բացահայտյալի հետ դեմքով չի համաձայնում նաև մասնական բացահայտիչը: Եթե սովորական բացահայտիչ և բացահայտյալի միջև առկա է նույնացման հարաբերությունը, բովանդակության տեսակետից հավասարաթեքությունը, ապա մասնական բացահայտիչ և դերանուն բացահայտյալի բովանդակությունները հավասար չեն: Գոյական բացահայտիչը սովորաբար լինում է անորոշ առմամբ և ավելի լայն հասկացություն է արտահայտում, քան դերանուն բացահայտյալը տվյալ դեպքում:

Օրինակ՝ «Բայց ես, իբրև ճշմարտի բարեկամ, միայն երջանկություն եմ ցանկանում ձեզ»։ Այստեղ ընդգծված բառը, իբրև մասնական բացահայտիչ, իր բովանդակությամբ հավասար չէ ես բացահայտյալին։ Մասնական բացահայտիչը հանդիպում է նաև որոշյալ առումով, և գոյականը իր մասնավորված իմաստով, բովանդակությամբ հավասար է դերանուն բացահայտյալին, բայց դարձյալ չի համաձայնում դեմքով, որովհետև վերջինիս կոնկրետ կիրառական բովանդակությունն այս դեպքում արտահայտում, ճշգրտում է դիմային փոխարինությունը։ Հմմտ. «Նս, իբրև իմ ծնողների միակ զավակը, չէի կարող քեզ նման այստեղ հանգիստ ապրել և մենակ թողնել նրանց» («Ավ.», 1967)։

Բացահայտիչ-բացահայտյալ կապակցության մեջ, երբ առկա է դիմային համաձայնությունը, և և դ մասնիկները, ունենալով բառափոխական, ձևակազմական արժեք, որը նրանց բուն էությունն է, ձեռք են բերում նաև բառերի միջև հարաբերություն ստեղծելու շարահյուսական արժեք՝ ծառայելով իբրև շարահյուսական հարաբերության արտահայտման եղանակներից մեկի՝ համաձայնության, դրսևորման ձևաբանական միջոց։ Այս մասնիկները շարահյուսական նույն դերն ունեն նաև այն դեպքում, երբ բուն-դիմային առում ունեցող գոյականը առանց դերանվան, իբրև ենթակա, գործածվում է ստորոգելիական հարաբերության մեջ, և դեմքով համաձայնում են ենթական ու ստորոգյալը։ Իսկ ընդհանրապես շարահյուսական մյուս հարաբերություններում, երբ բուն-դիմային առմամբ գոյականը գործածվում է առանց համապատասխան դերանվան (որն ավելի հաճախ պատահում է թեք հոլովաձևերում), նրա դիմային ցուցիչը շարահյուսական գործառություն չի ունենում, ծառայում է սոսկ տվյալ գոյականի դիմային հարաբերության, դիմային դիրքի արտահայտմանը։

Ստացական-դիմային առում։ Գոյականի ստացական-դիմային առմամբ արտահայտվում է առարկայի հատկացումը դիմային այս կամ այն կողմին։ Այս դեպքում, ուրեմն, ի տարբերություն բուն-դիմային առման, դրսևորվում է անվանաբար արտահայտվող առարկայի և դիմային կողմերի հարաբերությունը ստացականությամբ, երբ այդ առարկան խոսքային տվյալ իրադրությամբ դառնում է խոսող, խոսակից կամ դիմային 3-րդ կողմի ստացվածքը, պատկանելությունը։ Ընդհանրապես, Հր. Աճառյանի վկայությամբ, «շատ լեզուներ ունեն այս երևույթը և ավելի մեծ չափով»¹³։ Սակայն լեզուներում ստացականության իմաստը դիմային տարբերակմամբ միատեսակ արտահայտություն չունի։ Միևնույն լեզվում կարող է տարբեր միջոցներով արտահայտվել՝ համաժամանակյա կտրվածքով։ Այս տեսակետից բնորոշ է հայերենը։ Ժամանակակից հայերենում ստացականությունը դիմային տարբերակմամբ արտահայտվում է ինչպես բառական միջոցով՝ անձնական (դիմային) դերանվան սեռական հոլովաձևով (քն այգի), այնպես էլ ձևաբանական միջոցով՝ ստացական-դիմային մասնիկներով (այգիդ), երբեմն նաև նկարագրական եղանակով (այգին, որ պառկանում է քեզ)։ Սրանք լեզվական տարբեր, բայց հոմանիշ միջոցներ են և փոխադարձաբար լրացնում են միմյանց։ Եվ բանավոր կամ գրավոր հաղորդակցման պրոցեսում այս կամ այն միջոցի ընտրությունը, գործածությունը պայմանավորվում է խոսքային տվյալ պահի

¹³ Տե՛ս Հր. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 2, էջ 347։

պահանջներով, նպատակահարմարությամբ, անհրաժեշտությամբ, խոսողի կամ գրողի (հեղինակի) նախասիրությամբ, լեզվական սովորությունով ու ոճով, նրա հոգեկան-մտածական զանազան հանգամանքներով: Այսպես, երբ հոգորդման մեջ ստացականության իմաստն է ակտուալ դառնում, ապա արտահայտման բառական միջոցը նախընտրելի է, մասնավոր ստացականության օլիմպիկ հակադրության դեպքում, որովհետև բառական միջոցով ստացականությանն ավելի ընդգծված է արտահայտվում¹⁴: Օրինակ՝ «Նս իմ հոգով էի սիրել քեզ, իմ սրտով և ոչ թե նրանց» (Գ. Բ.): Ստացականության իմաստը մասնիկավորմամբ չի շեղվում, որովհետև ստացական-դիմային բառաձևով մասնիկի իմաստը, նախ՝ առանձին չի արտահայտվում, այլ գոյականի բառի-մաստի հետ համադրված, և ապա՝ հայերենի հնչյունաբանական օրենքով՝ ըս (կամ -րդ) վերջադիր հնչակապակցությունը չի կարող շեղտ կրել: Ստացական-դիմային առման բառաձևը շեղտելիս գոյականի իմաստն է ընդգծվում, մի բան, որ բոլորովին այլ նշանակություն ունի: Օրինակ՝ «Զա՛յնդ... դավաճան» (Ն. Զ.):

Ստացական-դիմային հարաբերությունն արտահայտվում է ս, դ, օ (երբեմն՝ լ/ն) ձևովներով, որոնց համար իմաստային ընգհանրությունը ստացականության հարաբերությունն է, իսկ տարբերությունը՝ դիմային հարաբերությունը:

Առաջին դեմքի ստացականությունն արտահայտվում է ս ցուցիչով: Օրինակ՝ «Աղոթիս պես մտիս մեջ է մայրս դեռ» (Հ. Շ.):

Երկրորդ դեմքինը՝ դ ցուցիչով: Օրինակ՝ «Շնորհ արա ինձ, որ օրհնյալ կամփիդ բարեհաճությամբ Ավարտի հասնի աղերսամատյանն այս ողբերգական...» (Գ. Ն.):

Երրորդ դեմքի ստացականությունն արտահայտվում է զգրո» ցուցիչով¹⁵, առանձին գործածություններում՝ լ/ն մասնիկով, երբ վերջինս համատեղում է որոշյալ-անորոշի հակադրության և ստացականության իմաստները¹⁶: Օրինակ՝ «Նա նույնիսկ չկար և մի տարեկան, երբ... մայրը գնաց: Գեթ հայրը մնար...: Բայց հայրն էլ գնաց» (Պ. Ս.)¹⁷: Բայց որովհետև զգրո» ցուցիչը չունի բացարձակ արտահայտություն (открытое выражение) և ինքնաբավ չէ այդ իմաստի դրսևորման համար (նրանով նաև դիմային չեզոքությունն է արտահայտվում), այդ պատճառով էլ 3-րդ դեմքի ստացականությունը գերազանցապես կենկրետանում է շարահյուսական համապատասխան պայմաններում կամ բառական միջոցներով: Բայց եթե գոյականի ստացական հարաբերությունն արտահայտվում է բառական միջոցով (իմ մայրը, ձեռքերը), ապա գործ ունենք գոյականի բառակապակցության, շարահյուսական հարաբե-

¹⁴ Տե՛ս Ս. Արրահամյան, Արդի հայերենի ստացական հոդերը, Եր. պետ. համալսարանի դիտ. աշխ., № 42, 1954, էջ 169:

¹⁵ Մանրամասն տե՛ս Ս. Արրահամյան, նշվ. հոդվ. և է. Թումանյան, նշվ. աշխ.:

¹⁶ «Ն» մասնիկը հոգնակի ստացականության իմաստ է արտահայտում որոշ միավանկ բառերում, օր.՝ «աչք-աչքներս», «ձեռք-ձեռքներս», «կողք-կողքներս» և այլն:

¹⁷ Հոգվածում տպագրվում են հետևյալ համառոտագրությունները. Ն. Զ.—Եղիշ Զարենց, Ն. Ի.—Նար-Դոս, Հ. Թ.—Հովհաննես Թումանյան, Ն. Զ.—Նաիրի Զարյան, Գ. Բ.—Գարեգին Բեն, Ավ. Իս.—Ավետիք Իսահակյան, Ս. Կ.—Սիրվա Կապուտիկյան, Ավ.—Երվանդարդ, Հ. Շ.—Հովհաննես Շիրազ, Գ. Ն.—Գրիգոր Նարեկացի, Պ. Ս.—Պարույր Սևակ:

րության հետ և ոչ թե նրա ձևաբանական արտահայտության, այնպես, ինչպես երբ որևէ բայի գործողության կամ եղելության սուբյեկտն արտահայտվում է կողմնակի ենթակայով և ոչ թե բայի համապատասխան ձևակազմությամբ:

Ստացական-դիմային առում բոլոր գոյականները չունեն: Կան գոյականներ, որ լինում են ստացական-դիմային չեզոքությամբ, այսինքն՝ նրանցով արտահայտվող առարկաները չեն կարող ունենալ դիմային տարբերակմամբ ստացական հարաբերություն:

Սովորաբար ստացական-դիմային առում ցուցաբերում են այն գոյականները, որոնց արտահայտած առարկաները կարող են ստացականության հարաբերության մեջ լինել (ստացականությունը ամենալայն իմաստով) դիմային կողմերի հետ որևէ հիմունքով:

Որոշ գոյականների բուն-դիմային կամ ստացական-դիմային իմաստը, չնայած համապատասխան դիմային ցուցչի առկայությանը, որոշակի չի լինում, որովհետև և էլ մասնիկները բաղմիմաստ են, և տվյալ գոյականի բառիմաստն էլ թեև պարզ է դիմային և՛ մեկ, և՛ մյուս իմաստը, օրինակ՝ ծնողներս — մտածվում է և՛ մենք՝ ծնողներս, և՛ իմ ծնողները: Նման դեպքերում դիմային այս կամ այն իմաստը որոշակի արտահայտելու համար օժանդակության են գալիս բառական շրջապատն ու խոսքային շղթան, այսինքն՝ շարահյուսական և կոնտեքստային գործոնները: Այսպես՝ «Ծնողներս մոռանում ենք, որ...» նախադասության մեջ ընդգծված բառի բուն-դիմային իմաստը որոշակի է դառնում նրա հետ համաձայնող ստորոգյալի դեմքով, մինչդեռ «Ծնը շներս մոռանում են, որ...» նախադասության մեջ նույն բառն ունի ստացական-դիմային առում. ադ է վկայում նրա հետ համաձայնող ստորոգյալի 3-րդ դեմքը: Հետևյալ օրինակում բուն-դիմային իմաստը կոնկրետանում է ամբողջ խոսքային շղթայով՝ «Վրաց լեզվի յուրահատուկ քերականության տեսական հիմունքների խորն ու անթերի ըմբռնման ցայտուն, ուսուցչիս հուսադրող ապացույցներ տալուց հետո, շուտով, սակայն, Տերյանը սկսեց ընդհատումներով հաճախել դասախոսություններին» (Մառի հուշերից):

Շարահյուսական տեսակետից ստացական-դիմային առումը որոշ տարբերություն ունի բուն-դիմային առման նկատմամբ: Եթե բուն-դիմային առման ժամանակ առանձին կիրառություններում գոյականի դիմային ցուցիչները ծառայում են շարահյուսական հարաբերությունների արտահայտմանը (ինչպես նշվեց վերևում), ապա ստացական-դիմային առման դեպքում դրանք ունեն միայն ձևաբանական արժեք, որովհետև, կազմելով գոյականի որոշակի ձևը, արտահայտում են միայն դիմային կողմերի նկատմամբ և ոչ թե բառերի միջև եղող հարաբերություն: Այդ պատճառով էլ ստացական-դիմային առմամբ գոյականի դեմքը փոխելով՝ նրա պաշտոնը չի փոխվում նախադասության մեջ: Օրինակ՝ «Բերեցի գիրքս/գիրքդ»: Առավել զգալի է պատկանելության իմաստ ունեցող այս մասնիկների և գոյականի սեռական հոլովի վերջավորությունների տարբերությունը: Օրինակ՝ —ի, —դ, —ու վերջավորությունները, որոնք նույնպես կարող են արտահայտել պատկանելության իմաստ, բայց, իհարկե, առանց դիմային տարբերակման, կազմելով գոյականի որոշ բառաձևը. միաժամանակ ծառայում են իբրև շարահյուսական հարաբերության արտա-

հայտման միջոց (նրանցով, օրինակ, ստեղծվում է հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությունը)¹⁸։

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարող ենք ասել, որ ժամանակակից գրական հայերենի գոյականի ձևաբանական-կիրառական հատկանիշներից մեկը դիմային առումն է։

ЗНАЧЕНИЯ ЛИЦА АРТИКЛЕЙ СОВРЕМЕННОГО АРМЯНСКОГО ЯЗЫКА

Օ. Н. НАЗАРЕТЯН

Р е з ю м е

В современном армянском языке значение лица выражают не только личные местоимения и личные окончания глагола, но и артикли «ս» (s) и «դ» (d), в отдельных случаях — «ը/ն» (ə/n). Эти морфемы имеют словоизменительное значение: с их помощью образуется одна из грамматических форм существительного с соответствующим значением лица. Но существительное само по себе, вне речи нейтрально к лицу; только в процессе коммуникации, употребляясь в речи, оно приобретает грамматическое значение (и выражение) лица, напр., «սղամարդիկ» — мы мужчины, «սղամարդիկդ» — вы мужчины, «սենյակս» — моя комната, «սենյակդ» — твоя комната и. т. Значит, в современном армянском языке одним из морфолого-коммуникативных признаков существительного является *его личное применение*. Как грамматическая категория, оно представляется трехчленным противопоставлением. Первый категориальный член выражается флексией «ս», второй член — «դ», третий — нулевой флексией, в отдельных случаях — «ը/ն». Личное применение существительного представляется в двух планах содержания: собственно-личным («բժիշկներս» — мы врачи) и притяжательно (посессивно)-личным («ձեռքս» — моя рука) значениями.

¹⁸ Ժամանակակից հայերենում գոյականի դիմային առման ժամանակ արտահայտվում է ոչ միայն դիմային, այլև, երկրորդաբար, ածանցիկ կերպով, որոշյալ-անորոշի հակադրություն։ Դիմային առման ժամանակ գոյականի բառիմաստը մասնավորվում է դիմային հարաբերությանը, և նրանով արտահայտվող առարկան՝ մասնավորված, առանձնացված է մտածվում։ Ուրեմն, այս դեպքում առարկայի որոշյալությունը հենվում է դիմային հարաբերության վրա։ Այսպիսով, գոյականի դիմային ցուցիչները երկրորդաբար ունեն նաև որոշարկիչ դեր։ Այդ և պատճառը, որ դիմային այս կամ այն առման ժամանակ գոյականը հավելյալ ձևով ը/ն որոշիչ հոգ չի ստանում։ Այս մասին տե՛ս նաև՝ Գ. Զ ա հ ու լ յ ա ն, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967, էջ 39—40։